Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 1(49), ապրիլ, 63-78
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.1.063

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

ԷԼԻՆԱ ԱՍՐԻՅԱՆ*, ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
Երևանի պետական համալսարան

Հոդվածում ներկայացվում են քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրման տարբեր մոտեցումներ, շեշտադրվում դրանց բազմաչափ բնույթը: Հաշվի առնելով քաղաքական դիրքորոշումների հետազոտման վալիդացված մեթոդիկաների խիստ սահմանափակ լինելը և, մասնավորապես, հայալեզու գործիքակազմի բացակայությունը, ինչպես նաև տվյալ ոլորտի համակարգային և համակողմանի ուսումնասիրման կարևորությունը՝ հեղինակները մշակել և սույն հոդվածում առաջարկում են քաղաքական դիրքորոշումների չափման հեղինակային մեթոդիկա, որի հիմնական նպատակը քաղաքական դիրքորոշումների ձևավորման միտումների գնահատումն ու դրանց դրսևորման առանձնահատկությունների բացահայտումն է: Մեթոդիկան մշակվել է Ս. Աշի կոնֆորմիզմի տեսության և Դ. Կանեմանի ու Ա. Տվերսկու հեռանկարի տեսության հիմնադրույթների և սկզբունքների ինտեգրման հիման վրա:
Հարցարանի մշակումը իրականացվել է երեք հիմնական փուլերի միջոցով՝ տեսական վերլուծություն, փորձագիտական գնահատում և պիլոտային հետազոտություն: Հետազոտության պիլոտային փուլին մասնակցել է 52 հետազոտվող, որի արդյունքները վկայում են սանդղակների բարձր ներքին համաձայնության և հուսալիության մասին. կոնֆորմիզմի սանդղակի համար Կրոնբախ ալֆան կազմել է $\alpha = 0.871$, իսկ ռացիոնալության սանդղակի համար՝ $\alpha = 0.814$: Վերլուծության արդյունքում ստացված տվյալների հիման վրա քվարտիլային վերլուծությամբ սահմանվել են կոնֆորմիզմի և ռացիոնալության մակարդակների մեկնաբանման շեմերը:

* **Էլինա Ասրիյան –** հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ
Асриян Элина – кандидат психологических наук, доцент кафедры общей психологии ЕГУ
Elina Asriyan – Candidate of Psychological Sciences, Associate Professor at the Chair of General Psychology, YSU
Էլ. փոստ՝ elina.asriyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0003-4970-3527
** **Հասմիկ Սարգսյան** – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտ
Асмик Саргсян – аспирант кафедры общей психологии ЕГУ
Hasmik Sargsyan – PhD student, Chair of General Psychology, YSU
Էլ. փոստ՝ hasmik.sargsyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0009-0007-2453-5332

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.03.2026
Գրախոսվել է՝ 23.03.2026
Հաստատվել է՝ 02.04.2026
© The Author(s) 2026

Բանալի բառեր – *քաղաքական դիրքորոշումներ, ռացիոնալություն, կոնֆորմիզմ, կոնֆորմիզմի տեսություն, հեռանկարի տեսություն*

Քաղաքական դիրքորոշումների խնդիրը մշտապես գտնվել է գիտական ուսումնասիրությունների հետաքրքրության շրջանակում, սակայն առանձնահատուկ ուշադրության է արժանացել դրանց ձևավորման վրա ազդող հոգեբանական գործոնների բացահայտումը: Հոգեբանության մեջ դիրքորոշումների ուսումնասիրությունը ընդգրկում է տարբեր ուղղություններ: Ներկայումս, օրինակ, մեծ տարածում են գտել ինչպես սոցիալ-հոգեբանական, այնպես էլ նեյրոգիտական ուսումնասիրությունները, որոնք միտված են դուրս բերելու անձի դիրքորոշումների բնույթը որպես որոշում կայացնելու հիմք[1]:

2003 թվականին Ջ. Ջոսթի և այլ հեղինակների կողմից առաջարկվեց քաղաքական կողմնորոշումը նկարագրող ինտեգրատիվ մոդել: Մոդելի համաձայն՝ պահպանողական կողմնորոշումը պայմանավորված է կոգնիտիվ, մոտիվացիոն և սոցիալական գործոնների փոխազդեցությամբ, իսկ դրանց հիմքում հաճախ ընկած է սպառնալիքի, վախի և անորոշության կառավարման անհրաժեշտությունը[2]:

Չնայած դիրքորոշումների ուսումնասիրման վերաբերյալ հետազոտությունների բազմազանությանը, հասկացության սահմանումների ընդգրկուն բնույթին՝ այնուամենայնիվ քաղաքական դիրքորոշումների հետազոտման համար նախատեսված մեթոդիկաների առկայությունը խիստ սահմանափակ է, հատկապես՝ հայալեզու գործիքակազմը: Ուստի, հաշվի առնելով այս հանգամանքը, մեր առջև խնդիր ենք դրել ձևավորել հուսալի, վալիդ գործիք, որը միտված կլինի քաղաքական դիրքորոշումների չափմանը և հետազոտմանը:

Նպատակ: Մշակել վալիդ և հուսալի մեթոդիկա, որը կիրառական նշանակություն կունենա քաղաքական դիրքորոշումների հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Տեսամեթոդաբանական հիմք: Մեթոդիկայի հարցերի ձևավորման տեսական հիմքը Ս. Աշի կոնֆորմիզմի և Դ. Կանեմանի ու Ա. Տվերսկու հեռանկարի տեսություններն են[3]:

Խնդրի տեսական վերլուծություն: Դիրքորոշումների մասին պատկերացումները ձևավորվել են վաղ ժամանակներից և լայնորեն ուսումնասիրվել են

---

[1] Տե՛ս **Kanai, R., Feilden, T., Firth, C., & Rees, G.** (2011). Political orientations are correlated with brain structure in young adults. Current Biology, 21, 677–680. https://doi.org/10.1016/j.cub.2011.03.017: Տե՛ս նաև՝ **Stanley, L.** (2010). To the letter: Thomas and Znaniecki's The Polish Peasant and writing a life, sociologically. Life Writing, 7(2), 139–151. https://doi.org/10.1080/14484520903445271

[2] Տե՛ս **Jost, J. T., Glaser, J., Kruglanski, A. W., & Sulloway, F. J.** (2003). Political conservatism as motivated social cognition. Psychological Bulletin, 129(3), 339–375. https://doi.org/10.1037/0033-2909.129.3.339:

[3] Տե՛ս **Asch, S. E.** (1951). Effects of group pressure upon the modification and distortion of judgments. In H. Guetzkow (Ed.), *Groups, leadership and men: Research in human relations* (pp. 177–190). Carnegie Press. Տե՛ս նաև՝ **Kahneman, D., & Tversky, A.** (1979). Prospect theory: An analysis of decision under risk. *Econometrica, 47*(2), 263–291:

փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի և հարակից գիտակարգերում: Ըստ այդմ՝ անգլիալեզու գրականության մեջ հանդիպում են դիրքորոշումների երկու հիմնական հասկացություններ՝ attitude և set: Ըստ Ուզնաձեի՝ նախատրամադրվածությունը (set) ունի ֆիզիոլոգիական բնույթ, իսկ դիրքորոշումները բնույթով սոցիալական են: Ուզնաձեն, սակայն, չի սահմանափակվում դիրքորոշումների սահմանման նեղ տրամաբանությամբ. ըստ նրա՝ դիրքորոշումները բովանդակային շատ ավելի լայն շրջանակ ունեն և ներառում են ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալական հիմքեր[4]: Հարկ է նշել, որ սոցիոլոգիայում առաջին անգամ ատիտյուդ (attitude) տերմինը կիրառել են Վ. Թոմասը և Ֆ. Զնանեցկին: Ըստ նրանց՝ ատիտյուդները ունեն սոցիալական բնույթ և հաճախ ուսումնասիրվել են արժեքների (value) հետ, թեպետ այս հասկացությունները միմյանցից էականորեն տարբերվում են[5]:

Հղում տալով նեյրոգիտական մի շարք հետազոտությունների արդյունքներին, որոնք միտված են դիրքորոշումների ձևավորման և որոշման կայացման գործընթացների բացահայտմանը՝ հարկ է նշել, որ առանձնապես արդիական են դիրքորոշումների լիբերալ–ազատական և կոնսերվատիվ հակվածությունների ուսումնասիրմանը միտված հետազոտությունները: Մասնավորապես, նեյրոգիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ անհատների դիրքորոշման և որոշման կայացման առանձնահատկությունները պայմանավորված են ոչ միայն սոցիալական ազդեցություններով, այլև ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Այս համատեքստում կարևոր են Ռյոտա Կանայի հետազոտության արդյունքները, որոնց համաձայն՝ քաղաքական և սոցիալական դիրքորոշումների տարբերությունները կապվում են ուղեղի որոշ կառուցվածքների ծավալի հետ[6]:

Մասնավորապես, պահպանողական հակվածություններ ունեցող անձանց շրջանում արձանագրվել է նշաձև մարմնի (amygdala) հարաբերականորեն մեծ ծավալ, որը կապվում է վախի, սպառնալիքի ընկալման և սոցիալական անորոշությունից խուսափելու հետ, մինչդեռ լիբերալ դիրքորոշումներին առավել հակված անձանց շրջանում ավելի զարգացած է առաջնային գոտկային կեղևը (anterior cingulate cortex), որը կապված է կոգնիտիվ ճկունության, անորոշության հանդեպ տոլերանտության բարձր մակարդակի և ոչ ստանդարտ որոշումների կայացման հետ: Նմանատիպ արդյունքներ են ներկայացված նաև Ամոդիոյի ուսումնասիրությունում, որտեղ ցույց է տրվում, որ լիբերալ և պահպանողական դիրքորոշումներ ունեցող անձինք տարբերվում են կոգնիտիվ վերահսկողության և անորոշության հանդեպ տոլերանտության նեյրոֆիզիոլոգիական

---

[4] Տե՛ս **Tetradze, P.** (2022). Alternate unconscious: uznadze's theory of set. https://primordialsoup.info/articles/alternate-unconscious-uznadzes-theory-of-set

[5] Տե՛ս **Hermanowicz, J. C.** (2019). Change – social and personal: Thomas and Znaniecki's The Polish Peasant for the study of present-day change in global higher education. Ruch Prawniczy, Ekonomiczny i Socjologiczny, LXXXI(4), 51–68. https://doi.org/10.18290/rpeis.2019.81.4-4

[6] Տե՛ս **Kanai, R., Feilden, T., Firth, C., & Rees, G.** (2011). Political orientations are correlated with brain structure in young adults. Current Biology, 21, 677–680. https://doi.org/10.1016/j.cub.2011.03.017

ցուցանիշներով: Այս հետազոտությունները փաստում են, որ դիրքորոշումների ձևավորումը ներառում է ինչպես սոցիալական ազդակների նկատմամբ զգայունությունը, այնպես էլ որոշման կայացման կոգնիտիվ և հուզական նախատրամադրվածությունները: Այսպիսով, ներկայացված նեյրոգիտական ուսումնասիրությունները լրացուցիչ հիմք են տալիս քաղաքական դիրքորոշումը դիտարկելու որպես բազմաչափ և բազմագործոն հասկացություն[7]:

Սոցիալ-հոգեբանական համատեքստում անհատների կոնֆորմիստական դիրքորոշումները և խմբային վարքը ուսումնասիրել է Ս. Աշը, ով իրականացրել է բազմաթիվ գիտափորձեր՝ միտված սոցիալական ազդեցության ներքո անձի վարքային փոփոխությունների դուրսբերմանը, որոնք տեղի են ունենում, երբ անձը տարբեր պատճառներով համաձայնեցնում է իր տեսակետները մեծամասնության հետ: Ըստ Մ. Գոշինի, Դ. Գրիգորևի և Պ. Սորոկինի իրականացրած հետազոտության արդյունքների՝ երիտասարդները ավելի քիչ են հակված կոնֆորմիստական վարքի, քան ավելի հասուն սերունդը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երիտասարդների մեջ ինքնուրույնության դրսևորումը բացասական նշանակալի կապ ունի կոնֆորմիզմի դրսևորման հետ, իսկ այլոց կողմից ընդունելի լինելու պահանջը ունի դրական նշանակալիություն[8]:

Տեսական վերլուծությունը ակնհայտ է դարձնում այն փաստը, որ քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում կոնֆորմիզմը ունի էական նշանակություն: Դիրքորոշումների ձևավորման համատեքստում առավելապես կարևորվում են կոնֆորմիզմի տեսության հետևյալ սկզբունքները.

- ✓ Սոցիալական ազդեցություն: Ըստ այս դրույթի՝ անհատները կարող են փոխել իրենց համոզմունքները՝ համապատասխանեցնելով դրանք նշանակալի խմբի կամ հասարակության համոզմունքներին:
- ✓ Խմբային ճնշում: Անձի վարքի փոփոխություն, որն առաջանում է ի պատասխան խմբի կողմից կիրառված ճնշման:
- ✓ Նորմեր և ակնկալիքներ: Այս սկզբունքը պայմանավորված է սոցիալական նորմերին հետևելու և ուրիշների ակնկալիքները բավարարելու ցանկությամբ՝ հաշվի առնելով, որ անհատները հիմնականում խուսափում են քննադատական հետադարձ կապից: Սոցիալական ցանկալիության ֆենոմենը հաճախ պահանջում է համաձայնվել խմբի հետ, նույնիսկ եթե խումբը ակնհայտորեն կատարել է սխալ դատողություն[9]:

---

[7] Տե՛ս **Amodio, D. M., Jost, J. T., Master, S. L., & Yee, C. M.** (2007). Neurocognitive correlates of liberalism and conservatism. Nature Neuroscience, 10(10), 1246–1247:

[8] Տե՛ս **Goshin, M., Grigoryev, D., & Sorokin, P**. (2025). Adolescent agency and behavioral characteristics: Conformity, problematic behavior, need for cognition. Frontiers in Psychology, 16, Article 1410170. https://doi.org/10.3389/fpsyg.2025.1410170

[9] Տե՛ս **Asch, S. E.** (1951). Effects of group pressure upon the modification and distortion of judgments. In H. Guetzkow (Ed.), Groups, leadership and men: Research in human relations (էջ 177–190). Carnegie Press.

Քանի որ քաղաքական դիրքորոշումների առկայությունը պայմանավորում է համապատասխան որոշումների կայացումը, դիտարկել ենք նաև Դ. Կանեմանի և Ա. Տվերսկու հեռանկարի տեսությունը, որը նկարագրում և բացատրում է որոշում կայացնելու գործընթացը: Հեռանկարի տեսության հիմնական գաղափարն այն է, որ մարդիկ տարբեր կերպ են որոշումներ կայացնում շահույթ և կորուստ ենթադրող իրավիճակներում: Կորուստ ենթադրող իրավիճակներում նրանք ավելի հակված են ռիսկային որոշումների, իսկ շահույթ ենթադրող իրավիճակներում հակված են խուսափելու ռիսկից: Սա տարբերվում է դասական ռացիոնալ ընտրության մոտեցումից, որում ենթադրվում է, որ մարդիկ միշտ խուսափում են ռիսկից և իրենց ընտրությունները հիմնավորում են վերջնական արդյունքներով[10]: Որոշում կայացնելու այս առանձնահատկությունները քաղաքական վարքում կարող են դրսևորվել նույնիսկ ավելի ուժեղ, քան տնտեսական որոշումների պարագայում[11]:

Հարցարանը կազմելիս օգտագործվել են հեռնակարի տեսության հետևյալ հիմնադրույթները.

- ✓ Կորուստ - շահույթ ասիմետրիա (Loss Aversion) - կորուստները սուբյեկտիվորեն ավելի ծանր են ընկալվում, քան նույն չափի շահույթները, ինչը պայմանավորում է ռիսկից խուսափող վարք:
- ✓ Հենման կետ / համեմատական ելակետ (Reference Point) - անձը հակված է գնահատելու արդյունքները ոչ թե բացարձակ արժեքով, այլ դրանց «սկզբնական» կետի համեմատությամբ:
- ✓ Ափսոսանքից խուսափում (Regret avoidance) - անձը հակված է խուսափելու ռիսկ պարունակող որոշումներից, քանի որ կարող է սխալվել:
- ✓ Որոշակիության էֆեկտ (Certainty Effect) - ըստ այս դրույթի՝ անձը սովորաբար նախընտրում է լիովին երաշխավորված արդյունքը, նույնիսկ այն դեպքում, երբ ռիսկ պարունակող տարբերակը կարող է ապահովել ավելի մեծ շահույթ:
- ✓ Ֆրեյմային էֆեկտ (Framing Effect) - ըստ այս դրույթի՝ որոշում կայացնելու վրա մեծ ազդեցություն ունի տեղեկատվության ներկայացման ձևը: Եթե տեղեկատվությունը ներկայացվում է դրական ֆրեյմով, և շեշտադրվում է շահույթը, ապա անհատները հակված են ընտրելու ավելի ապահով, ռիսկից խուսափող տարբերակը: Իսկ երբ նույն տեղեկատվությունը ներկայացվում է բացասական ֆրեյմով, և շեշտադրվում են հնարավոր կորուստները, մեծանում է ռիսկային ընտրության հավանականությունը: Թեև տեղեկատվության բովանդակային արդյունքը նույնն է, ներկայացման ձևը ազդում է որոշման կայացման վրա:
- ✓ Հավանականությունների սխալ գնահատում (Probability Weighting) - անձը հակված է գերագնահատելու հնարավոր կորուստները՝ անտեսելով

[10] Տե՛ս **Kahneman, D., & Tversky, A.** (1979). Prospect theory: An analysis of decision under risk. Econometrica, 47(2), 263–291:

[11] Տե՛ս **Vis, B.** (2011). Prospect theory and political decision-making. Political Studies Review, 9(3), 334–343. https://doi.org/10.1111/j.1478-9302.2011.00238.x

դրանց իրական հավանականությունը, և միաժամանակ թերագնահատում է որոշումների հնարավոր օգուտները կամ հեռանկարը[12]:

Ամփոփելով դիրքորոշումների մասին տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությունները՝ կարող ենք ասել, որ դիրքորոշումը ինտեգրալ հասկացություն է, քանի որ ունի ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալական բնութագրիչներ: Դիրքորոշումների ձևավորման վրա ազդող գործոնները ուսումնասիրելիս անհրաժեշտ է դիտարկել երկու կարևոր գործոն՝ անձի կոնֆորմիզմը և ռացիոնալությունը, որոնց ձևավորման մակարդակը մատնացույց կարող է անել քաղաքական դիրքորոշումների անկախությունը և անձի ինքնուրույնության մակարդակը:

Այսպիսով, կոնֆորմիզմի և որոշումների ընդունման հիմքում ընկած գործոնների համակցված չափումը թույլ է տալիս բացահայտել դիրքորոշման ձևավորման ներքին և արտաքին մեխանիզմները: Մեր կողմից առաջարկվող գործիքը մշակվել է քաղաքական դիրքորոշումների ձևավորման հիմքում ընկած կոնֆորմիզմի և ռացիոնալության մակարդակները չափելու և ախտորոշելու նպատակով. այն չի կարող լինել քաղաքական դիրքորոշումների ձևավորման բոլոր գործոնների դուրսբերմանը միտված գործիք:

Հետազոտության մեթոդաբանություն: Հարցարանի մշակման գործընթացը բաղկացած է երեք հիմնական փուլերից՝

1. տեսական վերլուծության հիման վրա հարցապնդումների ձևավորում,
2. ոլորտի մասնագետների հետ քննարկում և խմբագրում,
3. մաթեմատիկական վիճակագրական մեթոդների կիրառմամբ հարցարանի հուսալիության ստուգում, սանդղակների հարաբերական շեմերի ձևավորում:

Հարցարանի մշակման փուլ: Առաջին փուլում ձևավորվել և կազմվել են հարցերը՝ ըստ Աշի տեսության և հեռանկարի տեսության հիմնադրույթների: Արդյունքում կազմվել են ռացիոնալության 16, իսկ կոնֆորմիզմի 18 հարցապնդումներ: Հարցապնդումները մասնակիցների կողմից գնահատվում են 1-5 սանդղակով, հետևյալ կերպ՝ «լիովին համաձայն եմ-5», «համաձայն եմ-4», «դժվարանում եմ պատասխանել-3», «համաձայն չեմ-2», «բացարձակ համաձայն չեմ-1»: Հրահանգի և հարցապնդումների բովանդակության մասին տեղեկատվությունը տրված է հավելվածում (տե՛ս **հավելված 1) :**

Հարցարանի նկարագրության և կիրառության ընթացակարգ: Տվյալների վերլուծման ժամանակ անհրաժեշտ է իմանալ, որ ստացված տվյալները համարվում են հում միավորներ և վերափոխվում են վերլուծական միավորների՝

---

[12] Տե՛ս **Kahneman, D., & Tversky, A.** (1979). Prospect theory: An analysis of decision under risk. Econometrica, 47(2), 263–291: Տե՛ս նաև՝ **Kononovich, T. A., & Myasoed, P. A.** (2020). Teoriya perspektiv v protsessakh prinyatiya resheniya. *Psikhologicheskie issledovaniya, 13*(70). **Белянин, А. В.** (2004). *Математическая психология как раздел экономической теории.* Философия, этика, религиоведение. **Довбенко, М. В., & Осик, Ю. И.** (2011). *Современные экономические теории в трудах нобелиантов.* Академия Естествознания:

ըստ մշակված ընթացակարգի: Նշենք նաև, որ վերլուծական միավորների բարձր արժեքը արտացոլում է համապատասխան գործոնի առավել բարձր արտահայտվածություն: Այս սկզբունքը պահպանելու նպատակով որոշ հարցեր վերակոդավորում են, որպեսզի պահպանվի հարցարանի միատարրությունը: Հարցերի հաշվարկման ընթացակարգը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 1. Ռացիոնալության՝ [1, 2, 4, 7, 8, 9, 15, 16] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ՝

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	0
2	1
3	2
4	3
5	4

Աղյուսակ 2. Ռացիոնալության՝ [3, 5, 6, 10, 11, 12, 13, 14] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ՝

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	4
2	3
3	2
4	1
5	0

Աղյուսակ 3. Կոնֆորմիզմի՝]1, 2, 6, 7, 9, 10, 14, 15] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ՝

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	0
2	1
3	2
4	3
5	4

Աղյուսակ 4. Կոնֆորմիզմի՝ [3, 4, 5, 8, 11, 12, 13, 16, 17, 18] հարցերի պատասխանները հաշվարկվում են հետևյալ կերպ՝

Պատասխանի տարբերակ	Տրվող միավոր
1	4
2	3
3	2
4	1
5	0

Արդյունքների վերլուծություն և ներկայացում: Ինչպես արդեն նշեցինք, առաջին փուլում, տեսությունների հիմնադրույթներից ելնելով, ձևավորել ենք հարցապնդումներ, մշակել ենք հարցերի վերլուծության ընթացակարգ: Հարցարանի մշակման երկրորդ փուլում մեթոդիկան ոլորտի մասնագետների կողմից ուսումնասիրվել և խմբագրվել է: Այնուհետև մեթոդիկայի հուսալիության մակարդակը ստուգելու համար իրականացրել ենք պիլոտային հետազոտություն 52 հետազոտվողների հետ: Ստացված տվյալները ըստ ընթացակարգի վերլուծելուց հետո հաշվարկել ենք Կրոնբախ ալֆայի գործակիցը IBM SPSS Statistics վիճակագրական ծրագրի միջոցով: Արդյունքում կոնֆորմիզմի սանդղակի դեպքում Կրոնբախ ալֆայի գործակիցը կազմել է α =0,900. այս սանդղակի համար Կրոնբախ ալֆայի գործակիցը միջինից բարձր է, որը վկայում է հարցերի բարձր հուսալիության մասին (տե՛ս աղյուսակ 5):

Ռացիոնալության սանդղակի համար իրականացվել է Կրոնբախի ալֆայի գործակցի հաշվարկ, որի արդյունքները ցույց են տվել ցածր ներքին համաձայնություն և հուսալիություն: Ելնելով այդ հանգամանքից՝ հարցերին տրված միավորները վերանայվել և վերաբաշխվել են:

Դիրքորոշումների չափման, հարցարանների սանդղակավորման գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը հաճախ դիտարկվում է որպես դիրքորոշման բացակայություն, պայմանական 0 կետ: Այս պարագայում Լիկերտի դասական սանդղակը լիարժեքորեն չի արտահայտում հետազոտության նպատակը, քանի որ այն չի տարբերակում իրական վերաբերմունքի առկայությունը, այլ արձանագրում է դրա բացակայությունը[13]:

Աղյուսակ 5. Կրոնբախ ալֆայի գործակիցը կոնֆորմիզմի սանդղակի համար՝

Reliability Statistics	
Cronbach's Alpha	**N of Items**
.900	**18**

Դիրքորոշումների չափման, հարցարանների սանդղակավորման գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը հաճախ դիտարկվում է որպես դիրքորոշման բացակայություն, պայմանական 0 կետ: Այս պարագայում Լիկերտի դասական սանդղակը լիարժեքորեն չի արտահայտում հետազոտության նպատակը, քանի որ

[13] Տե՛ս **Aybar, C., Pérez, V. & Pavía, J.M.** Scale matters: unravelling the impact of Likert scales on political self-placement. Qual Quant 58, 3725–3746 (2024). https://doi.org/10.1007/s11135-023-01825-2

այն չի տարբերակում իրական վերաբերմունքի առկայությունը, այլ արձանագրում է դրա բացակայությունը[14]:

Կարևոր է նշել, որ մեր կողմից չի թերագնահատվում Լիկերտի սանդղակավորման մեթոդը, պարզապես տվյալ հարցարանի բովանդակության չափման համար այն բավարար զգայունություն չի ապահովում: Քանի որ դիրքորոշումը ենթադրում է որոշակի վերաբերմունքի առկայություն, «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը մեր հետազոտության շրջանակում դիտարկվել է որպես դիրքորոշման բացակայություն և ստացել նվազագույն միավոր: Այս հիմքով իրականացվել է սանդղակի վերակոդավորում հետևյալ կերպ. «լիովին համաձայն եմ» — 5, «համաձայն եմ» — 4, «համաձայն չեմ» — 3, «բացարձակ համաձայն չեմ» — 2, «դժվարանում եմ պատասխանել» — 1: Վերջին տարբերակը այս դեպքում հայտնվում է վերջում և վերջնական արժեքը կազմում է՝ 0:

Ըստ այդմ նոր ընթացակարգով վերլուծել ենք երկու սանդղակները՝ (կոնֆորմիզմ և ռացիոնալություն) առանձին-առանձին: Յուրաքանչյուր սանդղակի դեպքում համապատասխան հարցերի համար իրականացվել է վերակոդավորում, որից հետո SPSS վիճակագրական ծրագրի միջոցով հաշվարկվել է Կրոնբախ ալֆայի գործակիցը:

Աղյուսակ 6. Կրոնբախ ալֆայի գործակիցը ռացիոնալության ընդհանուր ցուցանիշի համար

Reliability Statistics	
Cronbach's Alpha	N of Items
.814	16

Աղյուսակ 6-ից տեսանելի է, որ 16 հարցի համար Կրոնբախ ալֆայի գործակիցն է $\alpha = 0.871$, որը վկայում է այն մասին, որ սանդղակը համապատասխանում է հուսալիության չափորոշիչներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ $\alpha \geq 0.70$ արժեքը համարվում է բավարար հուսալիության ցուցանիշ՝ կարելի է եզրակացնել, որ ռացիոնալության սանդղակն ունի միջինից բարձր հուսալիություն[15]:

Նույն վերլուծությունը իրականացրել ենք ռացիոնալության սանդղակի հուսալիության ստուգման նպատակով:

---

[14] Տե՛ս **Aybar, C., Pérez, V. & Pavía, J.M.** Scale matters: unravelling the impact of Likert scales on political self-placement. Qual Quant 58, 3725–3746 (2024). https://doi.org/10.1007/s11135-023-01825-2

[15] Տե՛ս **Lamm, K. W., Lamm, A. J., & Edgar, D.** (2020). Scale development and validation: Methodology and recommendations. Journal of International Agricultural and Extension Education, 27(2), 24–35. Տե՛ս **Samokhvalova, A. G., Shipova, N. S., Tikhomirova, E. V., & Vishnevskaya, O. N.** (2022). Metodika otsenki psikhologicheskogo blagopoluchiya studentov: Verifikatsiya i validizatsiya. Vestnik of Kostroma State University. Series:

Աղյուսակ 7. Կրոնբախ ալֆայի գործակիցը կոնֆորմիզմի սանդղակի համար(նոր միավորային բաշխմամբ)

Reliability Statistics	
Cronbach's Alpha	N of Items
.871	18

Աղյուսակ 7-ից ելնելով՝ կարող ենք ասել, որ նոր միավորային բաշխմամբ ստացված արդյունքը ($\alpha = 0.871$, $N = 18$) վկայում է բարձր մակարդակի ներքին համասեռության մասին, ինչը թույլ է տալիս ասել, որ այս դեպքում ևս ունենք հարցերի բարձր ներքին հուսալիություն:

Սանդղակների շեմերի նկարագրություն: Հաշվի առնելով մեր ընտրանքի քանակը և այն հանգամանքը, որ հետազոտությունը միտված է մեթոդիկայի նախնական մշակմանն ու հուսալիության գնահատմանը՝ մեր հետազոտությունում նպատահարմար ենք գտել օգտագործել քվարտիլային հաշվարկման տրամաբանությունը՝ շեմերի արդյունավետ բաշխման համար: Քվարտիլները հնարավորություն են տալիս տվյալների բաշխումը համաչափ իրականացնելու և ըստ այդմ օբյեկտիվորեն առանձնացնելու ցածր, միջին և բարձր մակարդակները: Քվարտիլները հաշվի են առնում տվյալների ներքին բաշխումը և թույլ են տալիս բաժանել մասնակիցներին խմբերի՝ հարաբերական, ոչ թե առավելագույն հնարավոր միավորի հիման վրա: Քվարտիլային բաշխման մոտեցումը լայնորեն կիրառվում է հոգեբանական թեստերում, որտեղ շեմերը սահմանվում են նմուշային տվյալների հիման վրա և հետագայում ստանդարտացվում են ավելի լայն խմբերի համար՝ համեմատելի արդյունքներ ապահովելու նպատակով: Այսպիսով, քվարտիլային մեթոդով սահմանված շեմերը ստանդարտացված, սկզբնական, չափման օբյեկտիվ ցուցիչներ են: Սակայն հարկ է նշել, որ ընտրանքի ավելացման դեպքում հնարավոր են շեմերի փոփոխություններ:

Կոնֆորմիզմի սանդղակի մեկնաբանման նպատակով քվարտիլային վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ շեմերը՝

- ✓ Կոնֆորմիզմի բարձր մակարդակ – 36–39 միավոր,
- ✓ Կոնֆորմիզմի միջին մակարդակ – 25–35 միավոր,
- ✓ Կոնֆորմիզմի ցածր մակարդակ – ≤ 24 միավոր:

Աղյուսակ 8. Կոնֆորմիզմի սանդղակի շեմերի հաշվարկը ըստ քվարտիլների

Statistics		
Կոնֆորմիզմ		
N	Valid	52
	Missing	0
Mean		28.63
Std. Deviation		8.559
Percentiles	25	24.00
	50	31.00
	75	35.00

Նույն վերլուծությունը իրականացվել է ռացիոնալության սանդղակի համար, ըստ այդմ առանձնացվել են հետևյալ շեմերը՝

- ✓ Ռացիոնալության բարձր մակարդակ – 37–52 միավոր,
- ✓ Ռացիոնալության միջին մակարդակ – 23–36 միավոր,
- ✓ Ռացիոնալության ցածր մակարդակ – ≤ 22 միավոր:

Աղյուսակ 9. Ռացիոնալության սանդղակի շեմերի հաշվարկը ըստ քվարտիլների

Statistics		
Ռացիոնալություն		
N	Valid	52
	Missing	0
Mean		29.37
Std. Deviation		9.806
Percentiles	25	22.75
	50	32.00
	75	37.00

Արդյունքների վերլուծություն: Քաղաքական դիրքորոշումների ձևավորումը դիտարկվում է որպես բազմաչափ գործընթաց, որի հիմքում ընկած են ինչպես սոցիալական ազդեցության մեխանիզմները, այնպես էլ անհատի՝ որոշում կայացնելու կոգնիտիվ առանձնահատկությունները: Մեր կողմից մշակված մեթոդիկան հնարավորություն է տալիս առանձին գնահատելու կոնֆորմիզմի և ռացիոնալության մակարդակները, սակայն դրանց համակցված գնահատումն ու վերլուծությունը թույլ կտան անցում կատարել դեպի դիրքորոշումների ձևավորման ինտեգրալ գնահատում:

Տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ անձի դիրքորոշումների ինքնուրույնության աստիճանը պայմանավորված է երկու հիմնական գործոնների հարաբերակցությամբ՝ սոցիալական ազդեցության նկատմամբ զգայունությամբ (կոնֆորմիզմ) և որոշումների կոգնիտիվ հաշվարկվածությամբ (ռացիոնալություն)։ Այդ համատեքստում առաջարկվում է քաղաքական դիրքորոշումների ձևավորման տիպաբանական մոդել, որը հիմնված է երկու սանդղակների մակարդակների համադրման վրա։ Քվարտիլային վերլուծության հիման վրա առանձնացված ցածր, միջին և բարձր մակարդակների համադրությամբ հնարավոր է տարբերակել քաղաքական դիրքորոշումների ձևավորման հինգ հիմնական տիպեր.

1. **Բարձր կոնֆորմիզմ և ցածր ռացիոնալություն –** բնութագրվում է դիրքորոշումների ձևավորման ցածր ինքնուրույնությամբ, սոցիալական ազդեցության նկատմամբ բարձր զգայունությամբ և արտաքին դետերմինացվածությամբ։
2. **Բարձր կոնֆորմիզմ և բարձր ռացիոնալություն –** արտացոլում է որոշումների հաշվարկվածության առկայությունը, սակայն պահպանվում է սոցիալական ճնշման ազդեցությունը։ Այս տիպը կարելի է բնութագրել որպես «ռացիոնալ կոնֆորմիզմ»։
3. **Ցածր կոնֆորմիզմ և ցածր ռացիոնալություն –** բնութագրվում է սոցիալական ազդեցության նկատմամբ հարաբերական անկախությամբ, սակայն որոշումների կայացման գործընթացում հնարավոր ինտուիտիվ կամ ոչ համակարգված մոտեցմամբ։
4. **Ցածր կոնֆորմիզմ և բարձր ռացիոնալություն –** արտացոլում է քաղաքական դիրքորոշումների ձևավորման բարձր ինքնավարություն, կոգնիտիվ ճկունություն և սոցիալական ճնշման նկատմամբ դիմադրողականություն։ Տվյալ համակցումը կարելի է դիտարկել որպես առավել հասուն անձի դիրքորոշումների ձևավորման մոդել։
5. **Միջին կոնֆորմիզմ և միջին ռացիոնալություն –** անցումային, հարաբերական հավասարակշռության տիպ, որը չի արտահայտում ծայրահեղ բնեռացված դիրքորոշում։

Ներկայացված տիպաբանական վերլուծությունից բացի, հետագա հետազոտություններում առավել մեծածավալ ընտրանքի առկայության պայմաններում հնարավոր է կիրառել նաև ինտեգրալ գծային ցուցանիշ՝ հաշվարկված որպես ռացիոնալության և կոնֆորմիզմի ստանդարտացված միավորների տարբերություն։ Նման ինդեքսը կարող է արտահայտել քաղաքական դիրքորոշումների ձևավորման ինքնավարության աստիճանը։

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ներկայիս հետազոտության պիլոտային բնույթը և ընտրանքի սահմանափակ ծավալը (N = 52), առավել նպատակա-

հարմար է դիտարկել տիպաբանական մոտեցումը՝ որպես նախնական ստանդարտացման մոդել, իսկ ինտեգրալ ինդեքսի կիրառությունը՝ որպես հետագա հետազոտությունների ուղղություն:

Եզրակացություն: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ առաջարկվող մեթոդիկան կիրառման տեսանկյունից համեմատաբար պարզ ընթացակարգ է, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու ստացվող արդյունքների հավաստիությունը տարբեր հետազոտական պայմաններում և ընտրանքներում: Այս համատեքստում մեթոդիկան կարող է ծառայել որպես վալիդ և հուսալի չափման գործիք:

ЭЛИНА АСРИЯН, АСМИК САРГСЯН – ***Разработка методики оценки политических диспозиций и проверки надежности.–*** В статье рассматриваются различные подходы к изучению политических установок с акцентом на их многомерный характер. Ограниченное количество валидированных методик исследования политических установок и отсутствие соответствующего инструментария на армянском языке обусловливают необходимость разработки новых диагностических средств. В связи с этим в исследовании представлена авторская методика измерения политических установок, направленная на оценку тенденций их формирования и выявление особенностей проявления. Методика разработана на основе интеграции теории конформизма С. Аша и принципов теории перспектив Д. Канемана и А. Тверски. Процесс разработки опросника включал теоретический анализ, экспертную оценку и пилотное исследование. В пилотной фазе приняли участие 52 респондента. Результаты показали высокую внутреннюю согласованность шкал. Коэффициент альфа Кронбаха составил 0.871 для шкалы конформизма и 0.814 для шкалы рациональности. Дополнительно проведен квартильный анализ для определения пороговых значений интерпретации уровней конформизма и рациональности. Полученные результаты подтверждают надежность методики и ее потенциал для дальнейшей стандартизации и применения в исследованиях политических установок среди молодежи в Армении в будущих эмпирических работах.

Ключевые слова: *Политические диспозиции, рациональность, конформизм, теория конформизма, теория перспектив*

ELINA ASRIYAN, HASMIK SARGSYAN – ***Development of a Methodology for Assessing Political Dispositions and Measuring Reliability.–*** The article presents various approaches to the study of political attitudes, emphasizing their multidimensional nature. Considering the limited availability of validated methodologies for studying political attitudes, particularly the absence of Armenian-language instruments, as well as the importance of systematic and comprehensive research in this field, the study introduces an original methodology for measuring political attitudes. The primary aim of this methodology is to assess the tendencies underlying the formation of political attitudes and to reveal their manifestation patterns.

The methodology was developed through the integration of S. Asch's theory of conformity and D. Kahneman and A. Tversky's Prospect Theory principles. The development of the questionnaire involved three main stages: theoretical analysis, expert evaluation, and a pilot study. The pilot phase included 52 participants, and the results indicate a high level of internal consistency and reliability of the scales. Cronbach's alpha was $\alpha = 0.871$ for the conformity scale and $\alpha = 0.814$ for the rationality scale. Based on the obtained data, quartile analysis was conducted to establish interpretative thresholds for the levels of conformity and rationality.

Key words: *Political dispositions, rationality, conformity, conformity theory, prospect theory*

Հավելված 1

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հրահանգ: Հարգելի՛ մասնակից, Ձեզ ենք ներկայացնում հարցապնդումներ, որոնք վերաբերում են Ձեր որոշում կայացնելու գործընթացին: Հիշե՛ք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ: Խնդրում ենք պատասխանել յուրաքանչյուր պնդմանը՝ տալով հնարավորինս անկեղծ պատասխաններ: Խնդրում ենք նշել, թե որքանով եք համաձայն կամ համաձայն չեք հետևյալ պնդումների հետ:

ՌԱՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆ
1.Քաղաքական որևէ ծրագրի նկատմամբ կարծիք ձևավորելիս առաջնահերթ գնահատում եմ դրա իրատեսականությունը, ոչ թե իմ նախնական կուսակցական/քաղաքական նախընտրությունները:
2.Քաղաքական կարծիք ձևավորելիս ինձ համար հավասարապես կարևոր են որոշման արդյունքում թե՛ հնարավոր շահերը, թե՛ հնարավոր կորուստները:
3.Քաղաքական դիրքորոշում ձևավորելիս հաճախ պահպանում եմ իմ նախնական դիրքորոշումը՝ սխալվելուց խուսափելու համար, նույնիսկ եթե հայտնվում են նոր փաստեր կամ հիմնավոր տեսակետներ:
4. Քաղաքական հարցերում, երբ ստանում եմ նոր և հիմնավոր տվյալներ, կարողանում եմ վերանայել և անհրաժեշտության դեպքում փոխել իմ նախնական դիրքորոշումը, նույնիսկ եթե դա նշանակում է ընդունել, որ նախկինում սխալվել եմ:
5. Քաղաքական դիրքորոշում ձևավորելիս հաճախ չեմ ընդունում այն փաստերը, որոնք հակասում են իմ դիրքորոշմանը, քանի որ վախենում եմ ընդունել, որ կարող էի սխալ լինել:
6.Կարևոր որոշումներ կայացնելիս ես նախընտրում եմ այն տարբերակը, որը կապահովի ավելի փոքր, բայց գրեթե 100% երաշխավորված շահույթ, քան ավելի շահեկան, բայց ոչ լիովին երաշխավորված տարբերակը:
7.Եթե նոր քաղաքական հնարավորությունը ենթադրում է զգալի ռիսկ, ես հակված եմ աջակցել դրան, նույնիսկ առանց մանրամասն հաշվարկելու հնարավոր կորուստներն ու ձեռքբերումները:
8. Ես պատրաստ եմ հաճախ փոխել իմ քաղաքական դիրքորոշումը նոր տեղեկատվության հիման վրա, նույնիսկ եթե սկզբնական կարծիքս ինձ համար կարևոր է:
9. Որոշումներ կայացնելիս հաճախ ուշադրություն չեմ դարձնում հնարավոր ռիսկերին, եթե անգամ սխալվելու հավանականությունը բարձր է:
10. Ես առավել հակված եմ աջակցելու այն քաղաքական ծրագրին, որը ներկայացվում է որպես արդեն գոյություն ունեցող վտանգների կանխում, քան այն ծրագրին, որը ներկայացվում է որպես նոր հնարավոր շահույթներ ստանալու հնարավորություն:
11. Եթե քաղաքական ծրագիրը ներկայացնելիս ընդգծվում է հնարավոր կորուստներից խուսափումը, իսկ մյուս դեպքում՝ հնարավոր շահույթները, ես նախապատվությունը կտամ առաջին տարբերակին:
12. Քաղաքական ընտրություն կատարելիս երբեմն ինձ վրա ավելի մեծ ազդեցություն է գործում այն, թե ինչպես է ծրագիրը ներկայացված, օրինակ՝ տեսահոլովակը, սլոգանը, քան ծրագրի իրական բովանդակությունը:
13. Նույնիսկ երբ կարիք կա անհապաղ որոշում կայացնելու, բայց տեղեկատվությունը բավարար և հստակ չէ, ես որոշում չեմ կայացնի, մինչև ամեն բան որոշակի չդառնա:
14. Անորոշ իրավիճակներում ես նախընտրում եմ առավել նվազ ռիսկ ունեցող լուծումները, նույնիսկ եթե դրանց հնարավոր արդյունքը աննշան է:
15.Անորոշությունը սովորաբար ինձ չի խանգարում քաղաքական դիրքորոշում ձևավորելիս. ես փորձում եմ գնահատել հնարավոր ռիսկերը:

16. Անորոշ քաղաքական իրավիճակներում, եթե արդեն ունեմ բավարար տեղեկատվություն, ես հակված եմ որոշում կայացնելու և ընդունելու դրա ռիսկը՝ չսպասելով լրացուցիչ լիովին վստահելի տեղեկատվության:

ԿՈՆՖՈՐՄԻԶՄ
1.Քաղաքական որոշում կայացնելիս, եթե իմ կարծիքը տարբերվում է ընտանիքիս կարծիքից, սովորաբար հարմարվում եմ նրանց կարծիքին:
2.Քաղաքական որոշում կայացնելիս ընկերներիս կարծիքը շատ եմ կարևորում և սովորաբար չեմ ցանկանում տարբերվել նրանցից:
3.Անկախ ընտանիքիս քաղաքական նախընտրություններից՝ ես ձևավորում եմ և պահպանում եմ իմ սեփական քաղաքական համոզմունքները:
4.Քաղաքական որոշումներում ընկերներիս կարծիքը կարևորում եմ, սակայն հաճախ տարակարծություն ենք ունենում, կարծում եմ դա նորմալ է:
5.Քաղաքական կարծիք արտահայտելիս ես հիմնականում այլոց կարծիքներով չեմ առաջնորդվում, ես ունեմ իմ սեփական տեսակետը:
6.Իմ որոշումները մեծապես կախված են շրջապատի մարդկանց կարծիքներից, նախընտրում եմ չտարբերվել:
7.Ինձ համար հասարակության կարծիքը շատ կարևոր է, փորձում եմ հարմարվել բոլորին, միայն թե ոչ ոքի չհիասթափեցնեմ:
8.Հասարակական կարծիքից անկախ՝ ես սովորաբար ձևավորում եմ իմ քաղաքական դիրքորոշումը՝ հիմնվելով սեփական վերլուծության վրա:
9.Որոշումներ կայացնելիս անպայման հարցնում եմ հարազատներիս, մտերիմներիս կարծիքը, դժվարանում եմ միայնակ որոշումմ կայացնել:
10.Քաղաքական ընտրություն կատարելիս ես սովորաբար հետևում եմ այն տարբերակին, որն ավելի ընդունված է մեծամասնության կողմից:
11.Քաղաքական նախընտրություն ձևավորելիս հիմնականում անտարբեր եմ հասարակության կարծիքի նկատմամբ:
12.Քաղաքական որոշումներ կայացնելիս հիմնականում առաջնորդվում եմ իմ սեփական կարծիքով, նույնիսկ երբ մյուսներն ունեն այլ դիրքորոշում:
13.Քաղաքական հարցերում չեմ վախենում առաջնորդվել իմ սեփական արժեքներով, նույնիսկ եթե դա նշանակում է բախվել շրջապատի քննադատությանը:
14.Քաղաքական հարցերում ինձ համար անչափ կարևոր է, թե ինչ է մտածում հասարակությունն ու իմ շրջապատի մարդիկ, և իմ որոշումները հաճախ պայմանավորված են այդ ընդհանուր կարծիքով:
15.Քաղաքական հարցերում հասարակության հավանությանն արժանանալու համար ես հաճախ մեծ ջանքեր եմ ներդնում:
16.Քաղաքական որոշումներ կայացնելիս հիմնականում հենվում եմ իմ սեփական դատողությունների վրա և պարտադրված չեմ հետևում շրջապատի կարծիքին:
17.Երբ կարևոր քաղաքական որոշման առջև եմ կանգնում, կարողանում եմ դիմադրել հասարակության ճնշմանը և պահպանել դիրքորոշումս:
18.Քաղաքական դիրքորոշում ձևավորելիս կարևորություն չեմ տալիս հասարակությունից եկող ազդակներին. փորձում եմ սեփական կարծիք ունենալ:

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակները հաստատում են, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակները հաստատում են, որ շահերի բախում առկա չէ։

Օգտագործված գրականություն / References

Белянин, А. В. (2004). Математическая психология как раздел экономической теории. Философия, этика, религиоведение./ Belyanin, A. V. (2004). Mathematical psychology as a branch of economic theory. Philosophy, Ethics, Religious Studies.

Довбенко, М. В., & Осик, Ю. И. (2011). Современные экономические теории в трудах нобелиантов. Академия Естествознания./ Dovbenko, M. V., & Osik, Yu. I. (2011). Modern economic theories in the works of Nobel laureates. Academy of Natural Sciences.

Amodio, D. M., Jost, J. T., Master, S. L., & Yee, C. M. (2007). Neurocognitive correlates of liberalism and conservatism. Nature Neuroscience, 10(10), 1246–1247.

Asch, S. E. (1951). Effects of group pressure upon the modification and distortion of judgments. In H. Guetzkow (Ed.), Groups, leadership and men: Research in human relations (pp. 177–190). Carnegie Press.

Aybar, C., Pérez, V., & Pavía, J. M. (2024). Scale matters: Unravelling the impact of Likert scales on political self-placement. Qualitative & Quantitative, 58, 3725–3746. https://doi.org/10.1007/s11135-023-01825-2

Goshin, M., Grigoryev, D., & Sorokin, P. (2025). Adolescent agency and behavioral characteristics: Conformity, problematic behavior, need for cognition. Frontiers in Psychology, 16, Article 1410170. https://doi.org/10.3389/fpsyg.2025.1410170

Hermanowicz, J. C. (2019). Change – social and personal: Thomas and Znaniecki's The Polish Peasant for the study of present-day change in global higher education. Ruch Prawniczy, Ekonomiczny i Socjologiczny, LXXXI(4), 51–68. https://doi.org/10.18290/rpeis.2019.81.4-4

Jost, J. T., Glaser, J., Kruglanski, A. W., & Sulloway, F. J. (2003). Political conservatism as motivated social cognition. Psychological Bulletin, 129(3), 339–375. https://doi.org/10.1037/0033-2909.129.3.339

Kahneman, D., D., & Tversky, A. (1979). Prospect theory: An analysis of decision under risk. Econometrica, 47(2), 263–291.

Kanai, R., Feilden, T., Firth, C., & Rees, G. (2011). Political orientations are correlated with brain structure in young adults. Current Biology, 21, 677–680. https://doi.org/10.1016/j.cub.2011.03.017

Kononovich, T. A., & Myasoed, P. A. (2020). Teoriya perspektiv v protsessakh prinyatiya resheniya. Psikhologicheskie issledovaniya, 13(70).

Lamm, K. W., Lamm, A. J., & Edgar, D. (2020). Scale development and validation: Methodology and recommendations. Journal of International Agricultural and Extension Education, 27(2), 24–35.

Samokhvalova, A. G., Shipova, N. S., Tikhomirova, E. V., & Vishnevskaya, O. N. (2022). Metodika otsenki psikhologicheskogo blagopoluchiya studentov: Verifikatsiya i validizatsiya. Vestnik of Kostroma State University.

Stanley, L. (2010). To the letter: Thomas and Znaniecki's The Polish Peasant and writing a life, sociologically. Life Writing, 7(2), 139–151. https://doi.org/10.1080/14484520903445271

Tetradze, P. (2022). Alternate unconscious: Uzandze's theory of set. https://primordialsoup.info/articles/alternate-unconscious-uznadzes-theory-of-set/

Vis, B. (2011). Prospect theory and political decision-making. Political Studies Review, 9(3), 334–343. https://doi.org/10.1111/j.1478-9302.2011.00238.x

Caucasus Barometer survey methodology and data (CRRC-Armenia)